
ԳՆԴԱՊԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆԸ ԺՈՂՈՎԴԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

Ժողովուրդների պատմության մեջ, հատկապես ողբերգական պահերին լինում են անհատներ, որոնց կյանքն ու վախճանը արժանանում է հատուկ ուշադրության ժողովրդական երգարվեստի անանուն հեղինակների կողմից: Այդպիսիներից է Հայաստանի առաջին հանրապետության բանակի գնդապետ Հովհաննես Մազմանյանը: Նրա մահը՝ ինքնասպանությունը, խորապես ցնցել է հայ հասարակության լայն շրջաններին և հիմք հանդիսացել ժողովրդական երգերի ստեղծման համար, որ հայտնի են «Մազմանովի երգը» անվամբ: Այն պահպանվել է ժողովրդի հիշողության մեջ մինչև անցյալ դարի 70-ական թվականները (վերջին տարբերակը գրի ենք առել 1977 թ.):

«Մազմանովի երգի» պատմական հենքը 1920 թ. աշնանը թուրքական արշավանքի հետևանքով ծավալված ռազմական գործողություններն են Հայաստանի առաջին հանրապետության տարածքում, մասնավորապես Կարսի մարզում: Դրանց ակտիվ մասնակցություն է ունեցել գնդապետ Հ. Մազմանյանի հրամանատարության ներքո գործող առաջին գունդը, որ մարտերում աչքի է ընկել իր համարձակ ու հանդուգն հաղթանակներով:

«Մազմանովի երգի» իրական-պատմական ու բանահյուսական-վիպական հենքը, ինչպես վերը նշվեց, նրա ինքնասպանությունն է, որը տեղի է ունեցել 1920 թ. հոկտեմբերի 29-ի, լույս 30-ի գիշերը՝ Կարսի հանձնման նախօրյակին: «Կարսի անկումը ամեն տեսակետե սարսափելի աղետ եղավ: Իսկապես, այդ օրեն սկսած Հայաստանի անկախության օրերը հաշված էին»¹, – գրում է Ա. Խատիսյանը:

Տվյալ շարադրանքի նպատակից դուրս է Կարսի անկման պատճառների վերլուծությունն ու գնահատանքը, նշենք, մեր կարծիքով, ամենազլխավորը: Թշնամի հարևաններով շրջապատված, չորս ռազմաճակատներում մարտական գործողություններ վարող Հայաստանը արյունաքամ, հյուծված, ջարդերից, կոտորածներից ջլատված, տարածքների մեծ մասը կորցրած կարող էր դիմադրել ևս մի կարճ ժամանակամիջոց, բայց պաշտպանվել ու մանավանդ հաղթել ի գորու չէր: Մ. Վրացյանը, վկայակոչելով զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի տեղեկագիրը, գրում է. «Հայաստանը ունի չորս ճակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի» և դա իրողություն էր²: Բանակի պաշտպանունակության վրա որոշակի քայքայիչ,

¹ Ա. Խատիսյան. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 280:

² Մ. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 513: Տես նաև՝ Ա. Խատիսյան. նշվ. աշխ., էջ 289:

կազմալուծող դեր էր խաղում բոլշևիկյան քարոզչությունը, որը հատկապես ուժեղ էր Կարսի գործամասերում, և որը դասալքության հիմնական պատճառն էր:

...Դատնանք Կարսի բերդին և այն հանգամանքներին, որ մղեցին գնդապետ Մազմանյանին և մյուս երկու սպաներին՝ Չիլինգարյանին ու Բագրատունուն, որոնք, ի նշան բողոքի Կարսը հանձնելու որոշման, ինքնասպան եղան³:

1920 թ. Սեպտեմբերի 30-ին Հայաստանի կառավարության նիստում Կարսի պաշտպանության խնդրի քննարկման ժամանակ զինվորականները գտնում են, որ Կարսը երկու ամիս կարող է պաշտպանվել: Սակայն կառավարությունը կանխազգալով վտանգի մեծությունը իր ներկայացուցիչներն է ուղարկում ռազմաճակատի տարբեր հատվածներ: Կարս են գործուղվում գյուղնախարար Ս. Վրացյանն ու առողջապահության նախարար Ա. Բաբայանը⁴:

Կարս քաղաքի, բերդի՝ թշնամու հարձակումներին երկու ամիս դիմանալը գուրկ չէր հիմնավորումից: Բերդն ուներ հրանոթներով պաշտպանված տասը ամրոց, և համարվում էր ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հենակետ: Կարսում էին հայ նշանավոր գորավարներ Մ. Միլիկյանը (գորախմբի հրամանատար), Դանիել բեկ Փիրումյանը (բերդապետ) և այլք:

Հոկտեմբերի վերջին թշնամին արդեն Կարսը պաշարել էր: 29-ի երեկոյան ռազմական խորհուրդը որոշում է ընդունում Կարսը հանձնել թշնամուն առանց դիմադրության: Որոշումը, սակայն, բոլորի կողմից միանշանակ չի ընդունվում:

Ըստ հոկտեմբերի 29-ի խորհրդակցության մի այլ վարկածի համաձայն՝ պետք է տեղի ունենար գորաշարժ, հոկտեմբերի 30-ին Մազմանյանի գունդը պետք է անցներ հակահարձակման, որը տեղի չունեցավ: Այս իրադրության պայմաններում գնդապետը ինքնասպան եղավ:

Հոկտեմբերի 30-ին քաղաքն ու բերդը անձնատուր եղան: Ամենացավալին ու ողբերգականն այն էր, որ առանց կրակոցի: Գաղափար կազմելու համար նշենք աղետի չափը. գոհ գնացին 6000 հայեր, գերի մնացին գորավորներ Դ. Փիրումյանը, Խ. Արարատյանը, նախարար Ա. Բաբայանը: Հավելենք, որ 3000 գերիներից տուն վերադարձան միայն 600-ը⁵: Պաշտոնական տվյալներով «Կարսի գրավման ժամանակ ու հաջորդող շարաթներին, մինչև Կարսի մարզի ամբողջական հայաթափումը, 1921 թ. թուրքերը քաղաքում կոտորել են 8000, մարգում՝ 12000 հայ՝ հիմնականում տղամարդ»⁶: Ահա այս իրադրության մեջ, հոգեբանական-բարոյական ծայրահեղ լարված մթնոլորտում ծնունդ են առնում Մազմանյանի ինքնասպանության վերաբերյալ ժողովրդական երգեր, որոնք վիպական-բանասիրական

³ Ոգուն չապավինելու արդյունքը, կազմեց, առաջարանը գրեց, ծանոթագրեց, թարգմանեց, խմբագրեց, հրատարակության պատրաստեց Գեորգ Յազըճյանը, Երևան, 2002, էջ 130:

⁴ Ս. Վրացյանն և նշվ. աշխ., էջ 506:

⁵ Նույն տեղում, էջ 509-510:

⁶ Հայկական հարց, հանրագիտարան, Երևան, 1996, էջ 179, 181:

հայացքով մեկնաբանում, իմաստավորում, գնահատում են կատարվածը, մի գնահատական, որը համընկնում է իրական-պատմականին:

Մազմանյանի ինքնասպանության փաստը զանազան աղբյուրներում ներկայացվում է տարբեր մանրամասնություններով: Ըստ Արտաշես Ալեքսանդրյանի՝ գնդապետը, դժգոհ Կարսի հանձնման վերաբերյալ ռազմական խորհրդի որոշումից, դուրս է գալիս խորհրդակցությունից, գնում դեպի իր գունդը՝ քնած քաղաքի փողոցներով բարձրաձայն գոչելով. «Ում է Կարսը կուտաք»⁷: Տեղ է հասնում և գնդին հրամայում անցնել թշնամու թիկունքը, սակայն զինվորների մի մասն արդեն չկար, դասալիք էին եղել, մնացածները նրա հրամանին չեն ենթարկվում, և գնդապետն ատրճանակով վերջ է դնում իր կյանքին⁸: Վկայում են, որ հոգին ավանդում է «ա խ մայրիկ», «ա խ Հալաստան» բառերը շուրթերին:

Մեր ձեռքի տակ եղած ժողովրդական երգի տարբերակները ճշմարտացի, պատմական փաստին հարիր արտահայտություններով են ներկայացնում գնդապետի ինքնասպանության պատճառը.

*Մազմանովը լսեց Ղարսի վտանգը,
Տեսավ կքայքայվի ամբողջ բանակը,
Իր կողքից քաշելով ատրճանակը,
Իզուր գոհ տվեց իր քաղցր կյանքը⁹:*

Իրական փաստ է, որ գնդապետի դիակը բերում են Կարսի կայարան՝ Ալեքսանդրապոլ՝ տեղափոխելու նպատակով, իսկ թե ինչ կատարվեց, երգը շատ հակիրճ հուզական, շեշտակիր բառերով ներկայացնում է.

*Մազմանովի դիակը բերին ըստանցին,
Էտ անիրավ հայեր թողին գնացին¹⁰:*

Երգը դատապարտում է հայերին, պարսավում, որ Մազմանովի դիակը չկարողացան տեղափոխել.

*Դուք, անիրավ հայեր, բոլորդ կոտորվեք,
Մազմանովի դիակը գերի մի թողեք¹¹:*

Հայտնի է, որ երբ գնդապետի դին բերում են Կարսի կայարանը, խուճապահար զինվորներն ու բնակիչները փախչում են՝ դազաղը թողնելով կայարանում.

*Մարզրպանով բերին,
Դրին ըստանցին,*

⁷ Ա. Ալեքսանդրյան. Կարս. 1920-1921, Երևան, 1986, էջ 28:

⁸ Վ. Արծրունի. Հայ տաճկական պատերազմը, Հայ սպայությունը, Շատախ, Երևան, 2002, էջ 222, 226:

⁹ Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Երևան, 1989, էջ 141:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

*Բոլոր եղբայրները,
Թորգին գնացին¹²:*

Կա նաև հետևյալ վկայությունը. «Վերջին վագոնից հանել էին Մազմանովի դագադրը, պլաստֆորմի վրա դրել, բաց արել կափարիչը ու դիակը ծաղր ու ծանակի ենթարկել»¹³: Այդ կապակցությամբ բացատրության կարիք ունեն հետևյալ տողերը. «... դժբախտ Մազմանյանի դիակին վիճակված էր հասնիլ Կարսի կայարանը, բայց ոչ ավելի հեռուն, ու հոն մնար՝ հոշոտվելու գազազած թշնամիեն»¹⁴:

Ժողովրդական երգի հետևյալ տողերը բացում են փակագիծը. «հոշոտվել» թուրքավարի՝ անշունչ մարմնից վրեժ լուծել անցյալի անպատիվ պարտությունների համար.

*Մազմանովի օտքերը մխով նալեցին,
Մազմանովի դիագ տարան թաղեցին¹⁵:*

Ժողովրդական երգը Մազմանովի ինքնասպանության փաստը գնահատում, պարսավում և անարգանքի սյունին է գամում Կարսի կորստի, թշնամուն հանձնման համար, իբրև ազգային արժանապատվության ոտնահարման, ստորացման համաձույլ իրողություն:

Մի այլ տարբերակում Մազմանովը փոխարինվում է համարժեք Ղարս բառով.

*Ով հայեր, հայեր,
Անաստված հայեր,
Բոլորդ կոտորվեցեք,
Ղարսը թուրքին մի հանձնեք¹⁶:*

Երգը հորինվել է հայ վիպական բանահյուսությանը բնորոշ հակամարտության բացահայտմամբ: Դրա ամենավաղ գրառված տարբերակում օգտագործված է վիպական երգերին բնորոշ երկխոսությունը, հոխորտանքը, մեկը մյուսին սպառնալիքներ ուղղելը, վախեցնելը: Ըստ երգի՝ թշնամի Սալիմ փաշան սպառնում է հայերին.

*Սալիմ փաշան գրեց
Այսպես հրաման՝
Գանցնեմ Երևան,
Կկոտորիմ հայեր¹⁷:*

¹² Ա. Ղազիյանի անձնական արխիվ:

¹³ Ա. Ալեքսանդրյան. նշվ. աշխ., էջ 31:

¹⁴ Ծ. Արծրունի. նշվ. աշխ., էջ 226:

¹⁵ Ռ. Խաչատրյան. Թալին. – Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյութեր և ուսումնասիրություններ, գ. 19, Երևան, 1999, էջ 163:

¹⁶ Ա. Ղազիյանի անձնական արխիվ:

¹⁷ Նույն տեղում:

Հայ գորավարը նույնպես պատասխանում է հոխորտանքով.

*Գերակալ Հովսեփով
Ըսավ Սելիմ փաշին՝
Արզրբում կդարդրգիս
Մինչև կես ավուր ճաշին¹⁸:*

Երգում տեղ են գտել վիպական երգերին բնորոշ մակդիրներ, պարսավանքի բառեր արտահայտող, բանաձևային բանահյուսությանը բնորոշ արտահայտություններ (անհրավ, կոտորվեք, անաստված):

Տարբերակները պահպանել են աշխարհագրական միջավայրը ներկայացնող մի շարք տեղանուններ՝ Ղարս, Արզրբում, Ջարիշատ, Օլթի, պատմական-իրական հայ և թուրք գինվորականների անուններ՝ Սալիմ փաշա, Քյազրմ բեգ, Արտաշ, Մարզրպանով:

Բոլոր հուշագիրները, Կարսի անկման պատճառները քննողները վկայում են, որ գնդապետ Մազմանյանը քաջ ու խիզախ, հայրենասեր գինվորական էր, ուներ նաև թերություններ, ժողովրդական երգը, սակայն, նրան գնահատում է իբրև պատվասեր, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ օժտված հրամանատարի: Վկայում են, որ նրա մասին երգել են տակավին նրա կենդանության ժամանակ:

Մազմանյանին նվիրված ժողովրդական երգերն իրենց գորեղ արձագանքն են գտել նաև անհատ բանաստեղծների ստեղծագործություններում:

Գնդապետի հերոսական վախճանից հետո հորինված երգերից մի նմուշ բերում է Վ. Արծրունին. «Մազմանյանի մահեն անմիջապես հետո երգվեցավ շատ պարզ, անպաճույճ և գեղարվեստե գրեթե զուրկ, բայց կենդանապատկեր երգ մը, որու հետևյալ մասը՝ առանց վերապահության և սեթևեթի, կը նկարագրե հայկական ռազմաճակատի դառն իրականությունը:

*Նրանք եկան, խառնվեցան մեր անառիկ դիրքերի տակ,
Ոռնում էին դիրքերն ի վեր զերդ՝ գայլերի սոված ոհմակ:
Գնդապետը մեր քաջարի նշան տվեց վերջին կովի.
Ինչպես մի հոտ հեզ ոչխարի մերինները կարկամեցին:
Սովալլուկ գայլերի պես նրանք սողում էին դեպի մեզ,
Գնդապետը երեք անգամ աղաղակեց կովի նշան,
Երեք անգամ «հառա ջ» ձայնեց ու սլացավ սուսերամերկ,
Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կովի հրավեր...
Մերոնք, ասես, շշմած էին ինչպես հոտը հեզ ոչխարի,
Չկովեցին, չբռնացին հրացանները հազարլեզու,
Չխուսեցին գնդացիներ՝ հրակոկորդ հոետորներ.
Մինչ գազազած գայլերի պես նրանք սողում էին դեպ մեզ,
Մերինները կորսավին, բյուրակոնակ խուճապեցին:*

¹⁸ Նույն տեղում:

Երբ որ խուճապը նա տեսավ ոչխարախուռն իր գորքերի,
 Երբ ամոթը սև ամպի պես նստեց նրա ճակտի վրա,
 Իր դիակը սվինամերձ թշնամիի առաջ փովեց...
 Իսկ զինվորները դասալիք, մեր զինվորները խուճապող
 Հավաքեցին միջնաբերդում իրենց վախը ամոթալի,
 Խոնվեցին իրարու մոտ գերդ գայլ տեսած ոչխարի հոտ,
 Լյարդերի պես իրենց ճերմակ բարձրացացին մի դրոշակ...
 Այս պատմությունն ամոթակեզ սրտերից սիրտ է գալարում,
 Եվ ամոթը բյուրակնճիռ ճակատներն է մռայլում»:

Երգի բերված հատվածը պատկանում է երիտասարդ բանաստեղծ Ն. Ջարյանի գրչին: Հավանաբար այն գրել է դեպքերի անմիջական ազդեցության ներքո:

Կարսի անկումը և Մազմանյանի ինքնասպանության փաստը ծնունդ է տվել մեկ այլ բանաստեղծության, որի լույ ընթերցումը սուկումի, մահասարսուռ տրամադրությամբ է համակում: Նշենք, որ այս ստեղծագործության կենտրոնում մահը հաղթած հերոսն է, որի ստվերը շղթայված է Կարսի բերդին և հայտնի չէ, առասպելական շղթայված Արտավազդի նման՝ «Ինչի՞ հույսով, թե մինչև ե՞րբ, ոչ ոք գիտե...»¹⁹:

Ստորև ներկայացված են Մազմանյանին նվիրված Լ. Թոփչյանի և Ն. Ջարյանի ստեղծագործությունները:

ԿԱՐՍԻ ԲԵՐԴ

Գնդապետ Մազմանյանի նվիրական հիշատակին

Կարսի լքված ու ամայի բերդին մեջ հին,
 Երբոր կ'ոռնա հովը վայրի գիշերներուն,
 Ընդերքներեն անոր խավար ամրոցներուն,
 Դերդյուններ ու աղմուկներ խուլ կը լսվին...
 Այդ ուշ ժամուն ամայի բերդը կ'արթննա,
 Ջահ մը հանկարծ կը դողդողա միջնաբերդեն:
 Ու կ'ըսեն թե կը հայտնվի հոն տարորեն
 Ըստվեր մը, որ դեռ կը հսկե անոր վըրա...
 Բուերն անգամ, բորենիներն իսկ մահաբույր,
 Վայակաղկանձ, երբ հայտնվի ան, կանհետին,
 Ու կը մնան ուշ գիշերին տերը բերդին
 Խավարը խոր, հովը վայրի ու ստվերը լուռ...

Առասպել լ է կամ թե գրու յց, ոչ ոք գիտե:
 Կ'ըսեն թե՝ Ան հերոս մըն է՝ մահը հաղթած,
 Բայց իր ստվերն է այս բերդին մեջ շղթայված,
 Ինչի՞ հույսով, թե մինչև ե՞րբ ոչ ոք գիտե...²⁰

¹⁹ «Հայրենիք» (Բոստոն), 1956, ապրիլ, էջ 41:

²⁰ Նույն տեղում:

ԳՆԴԱՊԵՏ ՄԱԶՄԱՆՅԱՆԸ
(Կարսի անկման առթիվ)

Այս պատմությունը ամոթակեզ բերնե բերան է գալարվում,
Եվ ինչպես օձ բյուրաժանիք հոգիներն է մեր խայթում:

* * *

Նրանք եկան, խոնվեցան մեր անառիկ դիրքերի տակ,
Ռոնում էին դիրքերն ի վեր զերդ գայլերի սոված ոհմակ,
Գնդապետը մեր քաջարի նշան տվեց վերջին կովի,
Ինչպես մի հոտ հեզ ոչխարի մերիները կարկամեցին:
Սովալլուկ գայլերի պես նրանք սողում էին դեպ մեզ.
Գնդապետը երեք անգամ աղաղակեց կովի նշան,
Երեք անգամ «հառա ջ» ձայնեց ու սլացավ սուսերամերկ,
Երեք անգամ դիրքերն ի վեր նա պաղատեց կովի հրավեր...
Մերոնք, ասես, շշմած էին ինչպես հոտը հեզ ոչխարի,
Չկրոնվեցին, չգոռացին հրացանները հազար-լեզու,
Չխոսեցին գնդացիներ-հրակոտոր հրոետորներ.
Մինչ զագագած գայլերի պես նրանք սողում էին դեպ մեզ,
Մերիները կորասրվին, բյուրակրոնակ խուճապեցին:
Երբ որ խուճապը նա տեսավ ոչխարախուռն իր գորքերի,
Երբ ամոթը սև ամպի պես նստեց նրա ճակտի վրա,
Իր դիակը սրվինամերձ թշնամիի առջև փռեց...
Իսկ զինվորները դասալիք, մեր զինվորները խուճապող
Հավաքեցին միջնաբերդում իրենց վախը ամոթալի,
Խոնրվեցին իրարու մոտ զերդ գայլ տեսած ոչխարի հոտ,
Լյարդերի պես իրենց ձերմակ բարձրացուցին մի դրոշակ...
Այս պատմությունն ամոթակեզ սրտերից սիրտ է գալարվում,
Եվ ամոթը բյուրակրոնձիռ ճակատներն է մոայրում:
Այս պատմությունն է գալարվում մայթերի վրա, դահլիճներում,
Պատմվում է հազար լեզու, չարագուշակ ինչպես բուհու,
Գիշերվում է և իմ հոգում առկայծում է դեմքը նրրա –
Սուսերամերկ, հերոսատիպ, հերոսամահ գնդապետի:
Մերկացած սուրը նրա փայլատակում է իմ հոգում
Եվ ամոթի մութը սառցե շանթի նման ակոսում է:
Դեռ իմ հոգում վարանել են մերիները սվինահակ,
Դեռ իմ հոգում որոտում է նրա ձայնը ռազմահրավեր.
Դեռ իմ հոգում հազար-կոնակ խուճապում է հոտը նրանց.
Դեռ իմ հոգում նա կանչում է, աղաչում է դիրքերն ի վեր:
Նախատիքը հազար լեզու ու կշտամբանքը բյուրաչափ
Հակված գլուխը Մասիսի նա տեսնում է դեռ իմ հոգում:
Նա տեսնում է Եվրոպայի արհամարհանքը սառույցե,
Հայրենիքը խաչված կարասպ ու բյուր հույսեր սին ու պարասպ,
Հրդեհ, ավեր ու կոտորած, սով, հեծեծանք, համատարած
Մեկ վայրկյանում հազար անգամ նա տեսնում է դեռ իմ հոգում...

* * *

Նրրա աչքերն են այրրվում աղերսական, ազնվաբով,
 Նրրա ճակատն է մթազնում սև ամոթից դեռ իմ հոգում,
 Դեռ շանթի պես աստվածամերկ նրա սուրն է փայլատակում,
 Դեռ իմ հոգում կարկաչում է սուրբ փտակը նրա կրծքից...
 Նրրա մահը վառվում է դեռ հերոսության զերթ սուրբ պատկեր,
 Դեռ իմ հոգում նա մեռնում է, կարկաչում է ու ճառագում:
 Այս պատմությունն ամոթակեզ ամպանում է բյուր սրտերում,
 Մթին ամպում շանթի նման նրա մահն է փայլատակում...²¹

ПОЛКОВНИК МАЗМАНЯН В НАРОДНЫХ ПЕСНЯХ

АЛВАРД ГАЗИЯН

Резюме

К октябрю 1920 г. Первая Республика Армения переживала последние дни своей истории. В сентябре Турция, сговорившись с большевистской Россией, вторглась в пределы Армении и в конце октября турецкие войска стояли у стен Карса – важной стратегической крепости. Силы были несравнимы – изнуренная Армения вела также войну с советским Азербайджаном и меньшевистской Грузией. Было принято неоднозначное решение о сдаче Карса. В знак несогласия несколько офицеров застрелились, в том числе командир первого полка, известный своей храбростью и преданностью Родине, полковник Мазманян (Мазманов). В те дни не было возможности перевезти тело Мазманяна для захоронения в Александрополе, гроб полковника остался на станции Карс, затем был осквернен турецкими солдатами. Эти трагические события стали темой для народных песен.

COLONEL MAZMANYAN IN FOLK SONGS

ALVARD GHAZIYAN

Summary

By the October of 1920 the First Republic of Armenia had been suffering the last days of its history. In September Turkey, coming to an agreement with Bolshevik Russia invaded the bounds of Armenia and at the end of October was at the walls of Kars – important strategic fortress. The forces were incomparable. Armenia was already exhausted, as it also fought a war with Soviet Azerbaijan and Menshevik Georgia. A decision on surrendering Kars was made, which was not perceived ambiguously. To show their disagreement some officers of the army shot themselves, among them the commander of the first regiment, devoted and brave colonel Mazmanyman (Mazmanov). It was impossible to transport Mazmanyman's body to Aleksandropol for burying, and the colonel's corpse remained at Kars station and was desecrated by Turkish soldiers. These tragic events gave rise to folk songs.

²¹ «Վեւ» (Փարիզ), 1936, թիվ 1, հունվար - փետրվար, էջ 117: